<<Անալիտիկ>> ՓԲԸ 2013 թ. բաժնետիրոջ տարեկան

ընդհանուր ժողովի

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ընկերության 2013թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության վերստուգողի եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2013թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության 2013թ. տարեկան շահույթի /վնասի/ հաշվի հաստատում:
5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<Անալիտիկ>> ՓԲԸ 2013թ. տարեկան

ընդհանուր ժողովի (Բաժնետիրոջ որոշման)

ք. Երևան **25 հունիսի 2014թ.**

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

1. Ե. Զախարյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար՝ ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորություններն իրականացնող 100% ձայնի իրավունքով
2. Լ. Շահվերդյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ
3. Ի. Իսայան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ
4.Ա. Սիմոնյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ
5. Ա. Գալստյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ
6. Կ. Ղահրամանյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավար
7. Ա. Մարգարյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի քարտուղարության պետ
8. Գ. Սիմոնյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ
9. Ռ. Փիլոյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի

	իրավաբանական բաժնի պետ
10. Ս. Սարգսյան	<<Անալիտիկ>> ՓԲԸ գլխավոր տնօրեն խորհրդակցական ձայնի իրավունքով

Ժողովի նախագահ՝ Ե. Զախարյան

Քարտուղար՝ Ռ. Փիլոյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ընկերության 2013թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվության հաստատում:
2. Ընկերության վերստուգողի եզրակացության ներկայացում:
3. Ընկերության 2013թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատում:
4. Ընկերության 2013թ. տարեկան շահույթի /վնասի/ հաշվի հաստատում:
5. Ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժինների վճարման չափի հաստատում:

ՀԱՐՑ 1

Լսվեց ընկերության 2013թ. ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունը /կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՀԱՐՑ 2

Լսվեց ընկերության վերստուգողի եզրակացությունը /կցվում է/:

Ներկայացնող-Գ. Սիմոնյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ի գիտություն ընդունելով վերստուգողի եզրակացությունը, ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> ենթակետով, հաստատել <<Անալիտիկ>> ՓԲԸ 2013թ. տարեկան ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը:

ՀԱՐՑ 3

Լսվեց ընկերության 2013թ. տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատման հարցը /կցվում է/:

Զեկուցող- Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> ենթակետով, հիմք ընդունելով ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ գլխավոր տնօրենի հաշվետվությունը և վերստուգողի եզրակացությունը, հաստատել ընկերության 2013թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը:

ՀԱՐՑ 4

Լսվեց ընկերության 2013թ. շահույթի հաշվի հաստատման հարցը /տեղեկանքը կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> ենթակետով, հաստատել ընկերության 2013թ. տարեկան զուտ շահույթը՝ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո 6452.0 հազ. դրամ և զուտ շահույթը՝ հաշվի առած ավելացումները /շահութաբաժնի հաշվարկի 060 տող/ 9224.0 հազ. դրամ:

ՀԱՐՑ 5

Լսվեցին ընկերության տարեկան շահույթի բաշխման, տարեկան շահութաբաժնի վճարման չափի հաստատման հարցերը /առաջարկությունը կցվում է/:

Զեկուցող-Ս. Սարգսյան

ՈՐՈՇՎԵՑ՝

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի <<ժբ>> ենթակետով, հաստատել ընկերության 2013թ. տարեկան զուտ շահույթի բաշխումը հետևյալ համամասնությամբ.

ՀՀ կառավարության 03.03.2011թ. թիվ 202-Ն որոշման համաձայն, զուտ շահույթի /հաշվի առած ավելացումները/ 50 %-ը՝ 4612.0 հազ. դրամը փոխանցել պետբյուջե, որպես պետական մասնակության դիմաց շահութաբաժին.

զուտ շահույթի 5 %-ը՝ 323.0 հազ. դրամն ուղղել ընկերության պահուստային հիմնադրամ.

մնացած՝ 1517.0 հազ. դրամը /6452.0-4612.0-323.0/ թողնել որպես չբաշխված շահույթ:

ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ե. ԶԱԽԱՐՅԱՆ**

ԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ռ. ՓԻԼՈՅԱՆ**